

ՀԱԳՄՉ 14.20

Առաջին հրատարակություն
23-ը դեկտեմբերի 2003թ.
Ներառում է փոփոխություններ 1, 2 և 3-ը

Ականների վտանգի իրազեկման ծրագրերի և նախագծերի գնահատում

Տնօրեն,
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ, UNMAS)
2 United Nations Plaza, DC2-0650
New York, NY 10017
USA

Էլ. փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498
Կայքէջ՝ www.mineactionstandards.org

Նախագրուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակասականային գործունեության միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանցից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի <http://www.mineactionstandards.org> կայքէջը՝ վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով, կամ ՄԱԿ-ի ՀՉ <http://www.mineaction.org> կայքէջում:

Սեփականության իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակասականային գործունեության միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրանից որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱԾ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը վաճառքի ենթակա չէ:

Տնօրեն,
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (UNMAS, ՄԱԿԱԾ)
2 United Nations Plaza, DC2-0650
New York, NY 10017
USA

Էլ. Փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498

Բովանդակություն

Բովանդակություն	iii
Նախաբան	iv
Ներածություն	v
Ականների վտանգի իրազեկման ծրագրերի և նախագծերի գնահատում	1
1. Ծավալ.....	1
2. Փաստաթղթեր	1
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	1
4. Գնահատման նպատակ	2
5. Գնահատման գործընթաց	3
6. Ուղենիշ սկզբունքներ	4
6.1. Շահագրգիռ կողմերի ներգրավում	4
6.2. Համակարգում	5
6.3. Ինտեգրացիա	5
6.4. Համայնքային մասնակցություն և լիազորում	5
6.5. Տեղեկատվության կառավարում և փոխանակում	5
6.6. Համապատասխան հասցեականություն	6
6.7. Կրթում/Ուսուցում	6
6.8. Վերապատրաստում	6
7. Պարտավորություններ	6
7.1. Միավորված ազգերի կազմակերպություն	7
7.2. Ականյազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)	7
7.3. Ականների վտանգի իրազեկման (ԱՎԻ) կազմակերպություն	7
7.4. Դոնորներ.....	8
Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր.....	9
Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	10
Փոփոխությունների գրանցում	15

Նախաբան

Ականազերծման մարդասիրական ծրագրերի միջազգային չափորոշիչներն առաջին անգամ առաջարկվել են աշխատանքային խմբերի կողմից 1996թ-ի հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական կոնֆերանսի ժամանակ: Չափանիշներ սահմանվեցին վերգետնյա ականների վնասազերծման բոլոր ասպեկտների վերաբերյալ, առաջարկվեցին չափորոշիչներ, և «վնասազերծման» մի նոր համընդհանուր սահմանում ընդունվեց: 1996թ-ի վերջին Դանիայում առաջարկված սկզբունքները լրամշակման ենթարկվեցին ՄԱԿ-ի կողմից գլխավորած աշխատանքային խմբի կողմից և մշակվեցին «Ականների վնասազերծման մարդասիրական գործողությունների միջազգային չափորոշիչները»: Դրանց առաջին հրատարակությունը լույս է տեսել 1997թ-ի մարտին՝ ՄԱԿ-ի Ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ, UNMAS) կողմից:

Այդ ժամանակվանից ի վեր սկզբնական այդ չափորոշիչների ծավալն ընդլայնվել է՝ հակաականային գործունեության ոլորտի այլ բաղադրիչներ ընդգրկելու և գործառնական ընթացակարգերում, պրակտիկայում և նորմերում փոփոխություններն արտացոլելու նպատակով: Չափորոշիչները լրամշակվեցին և վերանվանվեցին «Հակաականային գործունեության միջազգային չափորոշիչների (ՀԱԳՄՉ)», որոնց առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ-ի հոկտեմբերին:

Միավորված ազգերի կազմակերպությունն ընդհանուր պատասխանատվություն է կրում հակաականային ծրագրերի արդյունավետ կառավարումն ապահովելու և հորդորելու համար, այդ թվում նաև չափորոշիչների մշակման ու պահպանման համար: Հետևաբար, ՄԱԿ-ի Ականազերծման ծառայությունը (ՄԱԿԱԾ, UNMAS) Միավորված ազգերի կազմակերպության այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-երի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ-երը մշակվում են Ժնևում Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի (ԺՄԱՄԿ) աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-երի նախապատրաստման, ուսումնասիրման և վերանայման աշխատանքներն իրականացվում են տեխնիկական հանձնաժողովների կողմից՝ միջազգային, կառավարական և ոչ պետական/հասարակական կազմակերպությունների աջակցությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի թարմացված տարբերակը, ինչպես նաև տեխնիկական հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունը կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org> կայքէջում: ՀԱԳՄՉ-երից յուրաքանչյուրն առնվազնա երեք տարին մեկ անգամ վերանայվում է՝ հակաականային գործունեության ոլորտում զարգացող նորմերն ու փորձն արտացոլելու, ինչպես նաև միջազգային կանոնակարգերում և պահանջներում փոփոխություններն ընդգրկելու նպատակով:

Ներածություն

Գնահատման նպատակն է որակել Ականների վտանգի իրազեկման (ԱՎԻ, MRE) ծրագրերի արժեքը և հաստատել, արդյոք ԱՎԻ նախագծերն իրականացվել են ըստ պլանավորածի: Գնահատումը հետադարձ կապ և տեղեկություններ է ապահովում ծրագրային ռազմավարությունների և նախագծային արտադրանքի վերաբերյալ և հաստատում են, արդյոք դրանք բավարարել են տուժած բնակչության կարիքներն ու գերակայությունները: Գնահատումը կարևոր առաջարկություններ է ապահովում, որոնք կարելի է կիրառել՝ բարոելավելու հետագա ԱՎԻ ծրագրերն ու նախագծերը:

Գնահատումը սովորաբար տեղի է ունենում ԱՎԻ նախագծի ավարտին կամ էլ նախագծի մի նշանակալի փուլի ավարտից հետո; մոնիթորինգը նախագծի ողջ ընթացքում իրականացվող շարունակական մի գործողություն է: Գնահատումն ու մոնիթորինգը միմյանց լրացնող և սերտորեն կապված գործողություններ են, սակայն դրանք առանձին և հստակ գործառույթներ են: Մոնիթորինգն այն գործընթացն է, որի միջոցով ԱՎԻ գործողությունների և նախագծի արտադրանքի որակն է ապահովվում ըստ պլանի, մինչդեռ գնահատումը կենտրոնանում է նպատակների ձեռքբերման, նախագծի հետքանքների, հաշվետու լինելու և քաղած դասերի վրա:

Գնահատումը կարող է իրականացվել հենց ԱՎԻ կազմակերպությունների կողմից, կամ էլ դրանք կարող են իրականացվել արտաքին մարմնի կամ գործակալության կողմից:

Ականների վտանգի իրազեկման ծրագրերի և նախագծերի գնահատում

1. Ծավալ

Սույն չափորոշիչը սկզբունքներ է սահմանում և ուղեցույց է ապահովում՝ Ականների վտանգի իրազեկման (ԱՎԻ, MRE) ծրագրերի և նախագծերի վերաբերյալ:

2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ փաստաթղթերը կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղեցույցի դրույթների մի մասը:

3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

ՀԱԳՄՉ չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղեցույցների լեզվին:

- «պետք է» կիրառվում է՝ ցույց տալու այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն՝ չափորոշիչն ամբողջությամբ բավարարելու համար;
- «հարկավոր է» օգտագործվում է՝ նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար;
- «կարող է» օգտագործվում է՝ գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

“Ականների վտանգի իրազեկում” (ԱՎԻ, MRE) տերմինը վերաբերում է այն գործողություններին, որոնք ուղիներ են փնտրում նվազեցնելու ականներից/Պատերազմի պայթուցիկ մնացորդներից (ՊՊՄ, ERW) ստացած վնասվածքների վտանգը՝ բարձրացնելով իրազեկվածությունը և խթանելով վերաբերմունքի փոփոխություն, այդ թվում նաև հանրային տեղեկատվության տարածում, ուսուցում և վերապատրաստում և հակաականային գործունեության վերաբերյալ փոխգործակցություն համայնքների հետ:

“ԱՎԻ կազմակերպություն” տերմինը վերաբերում է ցանկացած կազմակերպությանը, այդ թվում նաև պետական, ոչ պետական, քաղաքացիական հասարակության կազմակերպությանը, (օրինակ՝ կանանց միություն, երիտասարդական միություն, կարմիր խաչի և մահիկի միություններ), առևտրային հաստատություններ և զինվորականներ (ներառյալ խաղաղապահ ուժերը), որոնք պատասխանատու են ԱՎԻ նախագծերի և առաջադրանքների իրականացման համար: ԱՎԻ կազմակերպությունը կարող է հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ լինել: “ԱՎԻ ենթամիավոր” տերմինը վերաբերում է կազմակերպության այն ստորաբաժանմանը, անկախ անվանումից, որը հավաստագրված է կատարելու նախատեսված մեկ կամ մի քանի ԱՎԻ գործողություններ, ինչպիսիքն են հանրային իրազեկման նախագիծ, դպրոցական կրթական նախագծեր կամ ակնազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովման նախագծի գնահատում:

«Հակաականային գործունեության ազգային կառույց» (ԱԳԱՄ) տերմինը վերաբերում է յուրաքանչյուր ականապատված երկրի պետական գերատեսչություն(ներ)ին, կազմակերպություն(ներ)ին կամ հաստատություն(ներ)ին, որոնք պատասխանատվություն է կրում հակաականային գործունեության կանոնակարգման, կառավարման և համակարգման համար: Դեպքերի մեծ մասում Հակաականային ազգային կենտրոնը (ՀԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից: Որոշ իրավիճակներում և դեպքերում ՄԱԿ-ի կամ մեկ այլ միջազգային ճանաչված մարմնի համար կարող է անհրաժեշտ և նպատակահարմար լինել ստանձնել ԱԳԱՄ-ի բոլոր պարտականությունները կամ դրանց մի մասը և իրականացնել դրա բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում ՄԱԿ-ը պետք է համապատասխան տեխնիկական աջակցություն ցուցաբերի, ներառյալ համապատասխան որակավորում ունեցող անձնակազմ, որը փորձառու է ԱՎԻ գործողություններում:

“Նախագիծ” տերմինը վերաբերում է համաձայնեցված նպատակ ունեցող մի գործողությանը կամ փոխկապակցված գործողությունների շարքին: Նախագիծը սովորաբար ստույգ տևողություն և աշխատանքային ծրագիր է ունենում: Այդ նպատակին հաջողությամբ հասնելու համար անհրաժեշտ ռեսուրսները/միջոցները սովորաբար սահմանվում և համաձայնեցվում են նախքան նախագծի մեկնարկը¹:

“Ծրագիր” տերմինը ենթադրում է կազմակերպության միջնաժամկետից երկարաժամկետ գործողությունները, որոնք տեղի են ունենում այդ կազմակերպության տեսլականի և ռազմավարական նպատակների իրագործման համար: Հակաականային գործունեության ծրագիրը բաղկացած է հակաականային գործունեության կապակցված նախագծերի շարքից: ԱՎԻ ծրագիրը նմանապես բաղկացած է ԱՎԻ կապակցված նախագծերի շարքից:

Տվյալ չափորոշիչի մեջ օգտագործված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը բերված է Հավելված Բ-ում: ՀԱԳՄՉ չափորոշիչների շարքում օգտագործված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ամփոփ ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում՝ Հակաականային գործունեության տերմինների, սահմանումների և հապավումների հավաքածու:

4. Գնահատման նպատակ

Գնահատումը “մի գործընթաց է, որը փորձում է համակարգված և օբյեկտիվորեն որակել միջամտության կամ քաղաքականության արժեքը կամ նշանակալիությունը: Արժեքի կամ նշանակալիության գնահատականն առաջնորդվում է սահմանված չափանիշների հղմամբ, օրինակ՝ համապատասխանությունը, գործունեությունը, արդյունավետությունը, ազդեցությունը և հաստատուն կայունությունը: Գնահատումը պետք է վստահելի և օգտակար տվյալներ ապահովի՝ հնարավոր դարձնելով քաղաքական դասերի ներառումը ծրագրի գործընկերների և դոնորների կողմից որոշումներ ընդունելու գործընթացում:”

Նշում՝ “օբյեկտիվորեն” բառը կիրառվում է՝ նշելու հավասարակշռված վերլուծություն ստանալու կարիքը՝ տարբեր աղբյուրների և մեթոդների կիրառմամբ ճանաչելով տարբեր շահագրգիռ կողմերի (բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված են ծրագրերով և դրանց ազդեցության ներքո են, ներառյալ շահառուները որպես առաջնային շահագրգիռ կողմ) կողմնակալությունը և հաշտեցնելով նրանց տեսանկյունները²:

Գնահատման նպատակը կարող է ներառել՝

¹. Հակաականային գործունեության մեջ նպատակ սահմանելու մեթոդը, ինչպես նաև այդ նպատակին հասնելու միջոցները և անհրաժեշտ ռեսուրսները սովորաբար կոչվում են “նախագծի առաջարկ” կամ “նախագծի փաստաթուղթ”:

2. UNICEF-ի “Ծրագրային կանոնակարգի և ընթացակարգերի ձեռնարկ”, 2001թ.:

- a) Գնահատման ենթակա ծրագրի կամ նախագծի բարելավում;
- b) Գիտելիքների ստեղծում և ավելի լայն կիրառման համար ուսումնառություն (քաղած դասեր և վրիպած հնարավորություններ);
- c) Նախագծային արդյունքները դարձնել թափանցիկ և հաշվետու:

Հատկապես ԱՎԻ դեպքում գնահատումը պետք է չափման ենթարկվի ըստ բնօրինակ ԱՎԻ նախագծային փաստաթղթերում նշված նպատակների և կարող է ներառել՝

- a) Պատահարների ցուցանիշի արտացոլում;
- b) Գիտելիքների ձեռքբերման, վերաբերմունքի, փորձի գործողությունների արդյունքում;
- c) Հատուկ ԱՎԻ մեթոդների և գործիքների կիրառման հետևանքների որակում;
- d) Պարզորոշել այն ծավալը, ըստ որի նախագծին անդրադարձել է թիրախային համայնքների ԱՎԻ կարիքներին ու ակնկալիքներին:

Գնահատման հինգ առանձնահատուկ չափանիշներ պետք է կիրառվեն՝ (a) նշանակություն, (b) արդյունավետություն, (c) գործունեություն, (d) ազդեցություն և (e) կայունություն:

- a) Արդյոք նախագիծը *նշանակալի* է. այն ծավալը, համաձայն որի ԱՎԻ նախագիծը հարմար է թիրախային խմբի, ԱԳԱՄ-ի, իրականացնող գործակալության և դոնորի (եթե կիրառելի է) մասնավոր կարիքներին, ակնկալիքներին և զերակայություններին;
- b) Արդյոք նախագիծն *արդյունավետ* է. այն ծավալը, համաձայն որի նախագիծն հասնում է իր նպատակներին և խնդիրներին;
- c) Արդյոք նախագիծը *գործունյա* է. այն ծավալը, համաձայն որի ձեռք է բերվում նախագծի արտադրանքը (քանակական և որակական) ի պատասխան ներդրումների, մասնավորապես ռեսուրսների և ծախսերի;
- d) Ինչ է *ազդեցությունը*. ԱՎԻ նախագծի օգուտներն ու ծախսերը՝ ուղղակի թե անուղղակի, մտադրված թե չմտադրված: Հարկավոր է անդրադառնալ քաղաքական, սոցիալ-տնտեսական, բնապահպանական և մշակութային խնդիրներին:
- e) Արդյոք գործողությունը *կայուն* է. այն հավանականությունը, որ ԱՎԻ նախագծի ձեռք բերած օգուտները կշարունակվեն, երբ դադարեցվեն դոնորական ֆինանսավորումը և/կամ հատուկ աջակցությունը (օրինակ՝ միջազգային տեխնիկական խորհրդատուներ):

5. Գնահատման գործընթաց

Գնահատումը ԱՎԻ նախագծային ծավալի հինգ փուլերի կարևոր մասն է կազմում՝ (1) տվյալների հավաքագրում և կարիքների գնահատում, (2) պլանավորում, (3) իրագործում, (4) մոնիթորինգ և (5) գնահատում:

Գնահատումը սովորաբար վերանայում և կրկին անդրադառնում է տվյալների հավաքագրման և կարիքների գնահատման փուլում ստացած կարիքներին և տեղեկություններին; վերանայում է պլանավորման փուլում սահմանված նպատակներն ու ցուցանիշները և որակում է մոնիթորինգի միջոցով վավերացված ԱՎԻ արդյունքները: ԱՎԻ նախագծի ողջ ընթացքի նախորդ փուլերի հետ նման կապի ընթրումն էական նշանակություն ունի արդյունավետ գնահատման հաջողության համար: Գնահատումը պարզապես «լրացուցիչ» գործողություն չէ:

Գնահատման ժամկետը կախված կլինի դրա հատկորոշված նպատակից և ինչպես են կիրառվում դրա առաջարկությունները: Գնահատումը կարող է տեղի ունենալ նախագծի ընթացքում որևէ կանխորոշված պահին, նախագծի ավարտին կամ էլ նախագծի ամփոփումից մի որոշ ժամանակ անց³:

“Գնահատումները կարող են լինել *ձևավորող* կամ *ամփոփիչ*: Ձևավորող գնահատումը գործընթացի գնահատման մի տեսակ է, որը նախաձեռնվում է նախագծի իրագործման ժամանակ՝ ապահովելու այնպիսի տեղեկություններ, որոնք ուշենիշի կարգով պետք է բարելավեն նախագիծը: Ձևավորող գնահատումը տեղի է ունենում նախագծի վաղ փուլում և գործողությունների կամ գործընթացների վերաբերյալ տվյալներ է հավաքագրում, որպեսզի հնարավոր լինի նախագծում կիրառել անհրաժեշտ փոփոխությունները կամ լրացումները: Ձևավորող գնահատումը կիրառվում է՝ ծրագրի ղեկավարներին և այլ անձնակազմին հետադարձ կապն ապահովելու նախագծի կամ ծրագրի բաղադրիչների մասին, որոնք գործում են կամ էլ կարիք ունեն փոփոխվելու”⁴: Ամփոփիչ գնահատումն այն գնահատումն է, որը որակում է նախագծի արդյունքները և չափում է գործողությունների արտադրանքն ու ազդեցությունն ըստ նախանշված նպատակների⁵:

6. Ուղենիշ սկզբունքներ

Ինչպես ներկայացվել է “Ականների վտանգի իրազեկման կառավարման վերաբերյալ ուղեցույցում” (ՀԱԳՄՉ 07.11), ԱՎԻ չափորոշիչների շարքը հիմնված է ԱՎԻ պահանջների կամ սկզբունքների փաթեթի վրա, որոնք հաշվի են առնվում նախագծային ողջ ընթացքի յուրաքանչյուր փուլում, և ապահովում են չափորոշիչների ձևակերպման շրջանակը: Այդ պահանջներից յուրաքանչյուրին ստորև անդրադարձ է կատարվում՝ ուղեցույց ապահովելու ԱՎԻ գնահատման վերաբերյալ:

6.1. Շահագրգիռ կողմերի ներգրավում

Հակաականային գործունեության մեջ ականներից տուժած համայնքներն առաջնային շահագրգիռ կողմն են, իսկ այլ շահագրգիռ կողմերն են հակաականային գործունեության կազմակերպությունները, իշխանություններն ու հանրային հաստատությունները, օգնության գործակալությունները և համայնքային խմբերը: Շահագրգիռ կողմերի մասնակցությունն անհրաժեշտ է նախագծի ողջ ընթացքի յուրաքանչյուր փուլում՝ ապահովելու, որպեսզի.

- a) Բավարարվեն ականներից տուժած համայնքների և խմբերի կարիքներին;

3. Երբեմն գնահատումներն իրականացվում են նախագծի մեկնարկին, և դրանք սովորաբար անվանվում են որպես որակում/գնահատական, իսկ դրանք ներկայացվում են ՀԱԳՄՉ 08.50-ում որպես տվյալների հավաքագրման և կարիքների որակման մի մաս:

4. Աղբյուրը՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, UNFPA, Վերահսկման և գնահատման գրասենյակ, *Մոնիթորինգի և գնահատման տերմինների հավաքածու*, տես www.unfpa.org/oe/toolkit/glossary.pdf կայքէջը:

5. Նույն աղբյուրից:

- b) Հաշվի առնվեն ազգային և տեղական տնտեսական և զարգացման գերակայությունները;
- c) Հակաականային գործունեությունն աջակցի և հնարավոր դարձնի մարդասիրական և զարգացման գործողությունները:

Գնահատումը պետք է որակի այն աստիճանը, ըստ որի շահագրգիռ կողմերը ներգրավված են եղել ԱՎԻ նախագծի ողջ ընթացքի յուրաքանչյուր փուլում:

6.2. Համակարգում

ԱՎԻ-ն պետք է լավ համակարգված լինի՝ թե նախագծերի միջև, և թե բուն նախագծի կազմում: Արդյունավետ համակարգումը հնարավոր կդարձնի մանկավարժական բովանդակության կայունությունը, կօպտիմալացնի ռեսուրսների կիրառումը և կնվազեցնի ջանքերի որևէ կրկնությունը: Իսկ գնահատումը պետք է որակի այն աստիճանը, ըստ որի համակարգված է եղել ԱՎԻ նախագիծը:

Նախագծի գնահատման բացահայտումների և առաջարկությունների ներկայացում/շնորհանդեսը և տարածումը պետք է նույնպես լավ համակարգված լինի:

6.3. Ինտեգրացիա

ԱՎԻ գործողությունները պետք է ամբողջապես ինտեգրված լինեն հակաականային գործունեության, մարդասիրական և զարգացման այլ գործողությունների հետ՝ նվաճելու համատեղ արդյունք: Գնահատումը պետք է որակի այն աստիճանը, ըստ որի ԱՎԻ նախագիծն ինտեգրված է եղել այլ գործողությունների հետ:

6.4. Համայնքային մասնակցություն և լիազորում

Ականներից տուժած համայնքները պետք է ակտիվորեն ներգրավված լինեն գնահատման մեջ:

- a) Գնահատումը պետք է որակի ԱՎԻ նախագծում ականներից տուժած համայնքների ներգրավվածության աստիճանը;
- b) Գնահատման գործընթացի ժամանակ սովորաբար պետք է խորհրդակցել ականներից տուժած համայնքների անդամների հետ;
- c) Գնահատման գործընթացի մեջ ներգրավված համայնքներին պետք է հետադարձ կապ ապահովել գնահատման արդյունքների վերաբերյալ: Կարող է նպատակահարմար լինել նաև համայնքներին օգտագործելով՝ գնահատման բացահայտումներն ու առաջարկությունները ներկայացնել համապատասխան լսարաններին (օրինակ՝ տարածքային իշխանություններ և պետական կառույցներ, համայնքի առաջնորդներ/իշխանություններ և ընդհանուր անդամներ):

6.5. Տեղեկատվության կառավարում և փոխանակում

Գնահատումը պետք է գնահատական տա հավաքագրված տեղեկությունների որակին, դրանց վերլուծման եղանակին և նախագծի տարբերփուլերում նախագծի պլանավորման և հետևանքների չափման տեսանկյունից դրանց կիրառմանն ու նպատակահարմարությանը:

Գնահատումը պետք է գնահատակ տա, թե հակաականային գործունեության հետադարձ կապի գործընթացում ականներից տուժած համայնքների և հակաականային գործունեության կազմակերպությունների միջև տեղեկատվության փոխանակումն արդյոք եղել է գործունյա և արդյունավետ: Օրինակ, այն ժամանակը, որ պահանջվել է համայնքներից տեղեկատվությունը փոխանցել ականագերծման կազմակերպություններին, այդ տեղեկատվության որակը և ինչպես է այդ տեղեկատվությունը յուրացվել:

6.6. Համապատասխան հասցեականություն

Գնահատումը պետք է գնահատակն տա, արդյոք տեղի է ունեցել և պահպանվել ԱՎԻ նախագծի կողմից համապատասխան հասցեագրում, ինչպես նաև պետք է որակի նախագծի ազդեցությունը թիրախային խմբերի վրա, մասնավորապես՝

- a) Գնահատումը պետք է ներառի թիրախային խմբերի տեսակետներն ու առաջարկությունները;
- b) Թիրախային ցանկացած համայնքի կազմում տարբեր խմբերը պետք է ներկայացված լինեն գնահատման համար օգտագործված ընտրանքի մեջ՝ անկախ կիրառված մեթոդաբանությունից;
- c) Գնահատումը պետք է որակի թիրախային խմբերի ընտրությունը և այդ ընտրության գործընթացը:

Տարբեր խմբերի միջև արդարությունը/անկողմնակալությունը պետք է ուսումնասիրվի որպես գնահատման մի մաս՝ սեռային, էթնիկական, լեզվաբանական կամ քաղաքական պատկանելիության վրա հիմնված ցանկացած տարբերակումներով: Ցանկացած կողմնակալ փորձառնություն (թե նախագծում և/կամ թե բուն գնահատման գործընթացում), որ կարող է առկա լինել կանխամտացված պատճառներով, պետք է հիմնավորված և բացատրված լինի:

6.7. Կրթում/Ուսուցում

Եթե կիրառելի է, ապա գնահատումը պետք է հաշվի առնի կրթական/ուսուցանող մեթոդաբանության և նյութերի որակը: Դա կարող է ներառել հաղորդագրությունների, վերապատրաստման և ուսումնական պլանների բաղադրիչների գնում: Մասնավորապես, անվտանգության հաղորդագրությունների ճշգրտության, որակի, նպատակահարմարության և հետևողականության գնահատումը պետք է իրականացվի:

6.8. Վերապատրաստում

Գնահատում իրականացնող անձնակազմը, ով հնարավոր է ականների և ՊՊՄ-ների վտանգին ենթարկվեն, պետք է մասնակցեն ականների անվտանգության վերապատրաստմանը:

ԱՎԻ գծով անձանակազմի ունակությունները և աշխատակիցների վերապատրաստման ծրագրի արդյունավետությունը կարող են որակվել որպես գնահատման մի մաս, դա կներառի պլանավորման փուլում սահմանված վերապատրաստման նպատակների գնահատումը:

7. Պարտավորություններ

Եթե սահմանված չեն առանձին դերակատարումներ և պարտավորություններ, ապա ընթերցողը պետք է անդրադառնա ՀԱԳՄՉ 07.11-ին՝ ԱՎԻ կառավարման ուղեցույցին:

7.1. Միավորված ազգերի կազմակերպություն

ՄԱԿ-ը և միջազգային կազմակերպությունները նշանակալի դեր են կատարում՝ թե՛ գնահատումներն իրականացնելիս, և թե՛ դրանք վավերացնելիս: Որևէ գնահատում վավերացնելիս ՄԱԿ-ը կարևորություն է հաղորդում այդ գնահատման բացահայտումներին և առաջարկություններին:

ՄԱԿ-ը կարող է աջակցել ԱՎԻ նախագծերի գնահատմանը և կարող է տարածել դրա արդյունքները:

7.2. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

ԱԳԱՄ-ը կամ դրա անունից գործող կազմակերպությունը պետք է՝

- a) խրախուսի ԱՎԻ նախագծերի գնահատումը և ապոհովի, որ ԱՎԻ կազմակերպությունները պայմաններ ստեղծեն նախագծերի գնահատման համար;
- b) գնահատի ազգային ԱՎԻ ծրագիրը և իր սեփական գործողությունները որպես հակաակնադին գործունեության ազգային պլանի մի մաս;
- c) նպաստի տեղեկատվության փոխանակմանը՝ տարածելով գնահատման զեկույցներն ու քաղած դասերը այլ ԱՎԻ կազմակերպությունների և այլ հապամատասխան շահագրգիռ կողմերի միջև, ինչպիսիքն են ազգային իշխանություններն ու դոնորները՝ ապահովելով, որ տեղի չունենա գաղտնի տեղեկությունների արտահոսք: Այն կարող է հավաքագրել արդյունքները և տարածել դրանք որպես “յուրացված դասեր”:
- d) ապահովի, որ գործողություններ նախաձեռնվեն գնահատման բացահայտումների ուղղությամբ:

7.3. Ականների վտանգի իրազեկման (ԱՎԻ) կազմակերպություն

ԱՎԻ-ով զբաղվող կազմակերպությունները պետք է՝

- a) գնահատեն իրենց սեփական առաջընթացն ըստ նախագծի նպատակների նվաճման և պետք է գնահատեն արդյունքները իրենց միջամտության ազդեցությունը/հետևանքները: Դա կարիք է առաջացնում համարժեք կերպով պլանավորել գնահատումը և հասանելի դարձնել պահանջվող անհրաժեշտ ռեսուրսները;
- b) ապահովեն, որ գնահատման գործընթացում ներգրավված լինեն համապատասխան շահագրգիռ կողմերը: Մասնավորապես նրանք պետք է ապահովեն համայնքի մասնակցությունը և խրախուսեն գնահատման կիրառումը որպես կրթական գործընթաց՝ ստեղծելու համայնքի անդամների և ԱՎԻ կազմակերպությունների անձնակազմի կարողությունները;
- c) պարտավորվում են ապահովել, որ գնահատողները (ներառյալ արտաքին խորհրդատուները) պատշաճ կերպով տեղեկացված լինեն և աջակցություն ստանան և արհեստավարժ ու անկողմնակալ վարքագիծ դրսևորեն՝ համաձայն ՀԱԳՄՉ-երին և/կամ գնահատման ազգային չափորոշիչներին;

- d) ապահովեն գնահատման արդյունքների կիրառումը: Գնահատումը պետք է փոխկապակցված լինի կարիքների որակման և նախագծի պլանավորման փուլերի հետ՝ երաշխավորելու, որ կնախաձեռնվեն նպատակահարմար հետագա գործողություններ:

ԱՎԻ-ով զբաղվող կազմակերպությունները պետք է ապահովեն գնահատման արդյունքների տարածումը; զեկույցների թափանցիկությունն ու հասանելիությունը (հնարավորության դեպքում շահագրգիռ կողմերի համաձայնությամբ); գնահատումից քաղած/յուրացրած ընդհանուր դասերի փոխանակումը ԱԳԱՄ-ի կամ ԱՎԻ համակարգման այլ մեխանիզմների միջոցով:

7.4. Դոնորներ

Դոնորական կազմակերպությունները պետք է՝

- a) ապահովեն, որ նախագծերն ունենան գնահատման բաղադրիչ և անհրաժեշտ ռեսուրսներ՝ դրանք նախաձեռնելու համար;
- b) գնահատեն նաև իրենց կողմից ֆինանսավորված նախագծերը և հաշվի առնեն գնահատման բացահայտումներն ու առաջարկությունները՝ հակաականային գործունեության ծրագրերի հետագա ֆինանսավորման համար:

Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրատարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Սակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան.

ա) ՀԱԳՄՉ 04.10 Ականազերծման գործողությունների տերմիններ, սահմանումներ և հապավումներ;

բ) ՀԱԳՄՉ 07.11 Ականների վտանգի մասին իրազեկման կառավարման ուղեցույց:

Պետք է օգտագործվի թվարկված փաստաթղթերի վերջին տարբերակը/հրատարակությունը: Այս չափորոշիչում կիրառված բոլոր փաստաթղթերի պատճենները տեղակայված են ՀԱԳՄՉ-երի կայքէջում (տես www.mineactionstandards.org): ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղեցույցների և փաստաթղթերի վերջին տարբերակների/հրատարակությունների գրանցամատյանը պահպանվում է ԺՄԱՄԿ-ում (Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոն) և հասանելի է ՀԱԳՄՉ-երի կայքէջում (տես www.mineactionstandards.org): ԱԳԱՄ-ը, գործատուները և շահագրգիռ այլ մարմիններն ու կազմակերպությունները նախքան հակաականային գործունեության ծրագրեր նախաձեռնելը պետք է ձեռք բերեն դրանց պատճենները:

Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հասպատումներ

B.1.

Համայնքի հետ կապի ապահովում

Ականազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովում

Կապի ստեղծում ականներ/ՊՊՄ տարածքներ ունեցող համայնքների հետ, որի նպատակն է տեղեկություններ փոխանակել ականների/ՊՊՄ առկայության և ազդեցության վերաբերյալ, հաշվետվական կապ ստեղծել ականազերծման գործողությունների ծրագրի հետ և մշակել ռիսկի կրճատման ռազմավարություններ: Համայնքի հետ կապի նպատակն է երաշխավորել, որ ականազերծման գործողությունների ծրագիրը պլանավորելիս, իրականացնելիս և մոնիտորինգ իրականացնելիս համայնքի կարիքները և գերակայությունները առաջին տեղում լինեն:

Նշում՝ Համայնքի հետ կապը հիմնված է տեղեկությունների փոխանակման վրա և մասնակից է դարձնում համայնքներին որոշումների կայացման գործընթացին (ականազերծումից առաջ, դարձնապատճառում և հետո)՝ ականազերծման գործողությունները ըստ գերակայությունների սահմանելու համար: Արդյունքում ականազերծման գործողությունների ծրագրերը լինում են ներառական, համայնքի կարիքներին միտված և ապահովում են համայնքի բոլոր հատվածների առավելագույն մասնակցությունը: Վերջինս ներառում է նախագծերի համատեղ պլանավորումը, իրականացումը, մոնիտորինգը և գնահատումը:

Նշում՝ Համայնքի հետ կապի նպատակներից մեկը անվտանգության միջանկյալ ռազմավարության համատեղ մշակումն է՝ խրախուսելու համար անհատական և համայնքային վարքագծի փոփոխությունը: Ռազմավարության նպատակն է կրճատել անհատների և համայնքի վրա ականների/ՊՊՄ ազդեցությունը մինչև վտանգը լիովին վերացվի:

B.2.

Ականազերծում

Մարդասիրական ականազերծում

Գործողություններ, որոնք նպաստում են ականների և ՊՊՄ-ների մաքրմանը՝ ներառելով տեխնիկական հետազոտում, քարտեզագրում, վնասազերծում, տեղանքի նշում, վնասազերծման վերաբերյալ փաստաթղթերի և վնասազերծված հողատարածքների հանձնում: Ականազերծումը կարող է տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվել, օրինակ՝ ՀԿ-ներ, կոմերցիոն ընկերություններ, հակաականային գործունեության ազգային թիմեր կամ զինվորական ստորաբաժանումներ: Ականազերծումը կարող է լինել արտակարգ իրավիճակային կամ զարգացման նկատառումներով:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցներում ականների և ՊՊՄ-ների վնասազերծումը համարվում է ականազերծման գործընթացի ընդամենը մեկ մաս:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցներում ականազերծումը համարվում է հակաականային գործունեության մի բաղադրիչ:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցներում “ականազերծում” և “մարդասիրական ականազերծում” տերմինները համարժեք են”:

B.3.

Կրթում

Սովորեցնելու և սովորելու միջոցով ժամանակի ընթացքում գիտելիքների (փաստերի, գաղափարների, ճշմարտության կամ սկզբունքների իմացություն կամ տիրապետում), վերաբերմունքի և փորձի տրամադրում և ձեռքբերում: [Օբսֆորդի անգլերենի համառոտ բառարան]:

B.4.

Գնահատում

Մի գործընթաց, որը փորձում է հնարավորինս համակարգված կերպով և օբյեկտիվորեն պարզորոշել միջամտության առավելությունը կամ արժեքը:

Նշում՝ “Օբյեկտիվորեն” բառը ցույց է տալիս հավասարակշռված վերլուծություն ստանալու կարիքը՝ ճանաչելով շահագրգիռ տարբեր կողմերի (բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված են ծրագրերով և գտնվում են դրանց ազդեցության ներքո, ներառյալ շահառուներին որպես առաջնային շահագրգիռ կողմեր) նախապաշարմունքը և հաշտեցնելով տեսանկյունները տարբեր աղբյուրների և մեթոդների օգտագործման միջոցով:

Նշում՝ Գնահատումը դիտվում է որպես ռազմավարական գործողություն:

Նշում՝ Այս սահմանումը կիրառվում է, երբ օգտագործվում է ծրագրերի առնչությամբ (*UNICEF-ի “Կանոնակարգի և ծրագրավորման ձեռնարկ”*):

Արդյունքի կամ արդյունքների շարքի վերլուծություն՝ սահմանելու համակարգչային փաթեթի, սարքավորման կամ համակարգի քանակական և որակական արդյունավետությունն ու արժեքն այն միջավայրում, որում այն գործելու է:

Նշում՝ այս սահմանումը կիրառվում է, երբ օգտագործվում է սարքավորումների փորձարկման և գնահատման համատեքստում:

B.5.

Ուղեցույց

ՀԱԳՄՉ-երից որևէ ուղեցույց, որն ընդհանուր կանոններ, սկզբունքներ, խորհուրդ և տեղեկություններ է ապահովում:

B.6.

Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ)

Միջազգային համայնքի անունից ՄԱԿ-ի կողմից կազմված փաստաթղթեր, որոնց նպատակն է բարձրացնել հակաականային գործունեության անվտանգությունը և արդյունավետությունը՝ ուղեցույց տրամադրելու, սկզբունքներ սահմանելու և որոշ դեպքերում, միջազգային պահանջներ և մասնագրեր սահմանելու միջոցով:

Նշում՝ ՀԱԳՄՉ-երը հանդես են գալիս որպես տեղեկատու փաստաթղթերի համակարգ, որը հորդորում է և որոշ դեպքերում նաև պահանջում է, որ հակաականային գործունեության ծրագրերի և նախագծերի դոնորներն ու ղեկավարներն ապահովեն և ցուցադրեն արդյունավետության և անվտանգության համաձայնեցված մակարդակ:

Նշում՝ ՀԱԳՄՉ-երն ապահովում են մեկ միասնական/ընդհանուր լեզու, և առաջարկում են տվյալների հավաքման, մշակման և վարման ձևաչափը և կանոնները, որոնք թույլ են տալիս ազատորեն փոխանակել տեղեկությունները: Այս փոխանակումից շահում են այլ ծրագրեր և նախագծեր: Բացի այդ, տեղեկությունների փոխանակումն օգնում է կատարել ռեսուրսների հավաքագրում, գերակայությունների սահմանում և կառավարում:

B.7.

Ական

Զինամթերք, որը նախատեսված է հողի կամ էլ որևէ այլ մակերեսի տակ, վրան կամ կողքին տեղադրելու և մարդու կամ սարքավորման անմիջական ներկայության, մոտ հեռավորության կամ շփման միջոցով պայթեցնելու համար [MBT]:

B.8.

Հակաականային գործունեություն

Գործողություններ, որոնք նպատակ ունեն մեղմելու ականների և ՊՊՄ-ների սոցիալական, տնտեսական և բնապահպանական ազդեցությունը:

- Նշում՝ Հակաականային գործունեությունը չի ենթադրում միայն ականագերծում: Այն վերաբերում է նաև մարդկանց և հասարակությանը և ականների ու ՊՊՄ-ների աղտոտման թողած ազդեցությանը: Համաականային գործունեության նպատակն է կրճատել ականների և ՊՊՄ-ների վտանգը՝ այն հասցնելով այնպիսի աստիճանի, որը թույլ կտա, որ մարդիկ ապրեն անվտանգ կյանքով, իսկ սոցիալական, տնտեսական և առողջապահական ոլորտները կգարգանան առանց ականների և ՊՊՄ-ների աղտոտման արդյունքում ստեղծվող խոչընդոտների, և տուժածների կարիքները կբավարարվեն: Հակաականային գործունեությունը պարունակում է գործողությունների հետևյալ հինգ փոխլրացնող խմբերը.
- a) ԱՎԻ;
 - b) Մարդասիրական ականագերծում, այսինքն՝ ականների և ՊՊՄ-ների հետազոտում, քարտեզագրում, տեղանշում և մաքրում;
 - c) աջակցություն տուժածներին, այդ թվում նաև առողջության վերականգնում և վերաինտեգրում;
 - d) կուտակված պաշարների վնասագերծում
 - e) հակահետևակային ականների կիրառման դեմ քարոզչություն
- Նշում՝ Պահանջվում են մի շարք այլ օժանդակող գործողություններ նշյալ հակաականային հինգ բաղադրիչների իրականացման համար, այդ թվում են՝ գնահատում և պլանավորում, ռեսուրսների հավաքագրում և առաջնահերթում, տեղեկատվության կառավարում, մարդկային հմտությունների զարգացում և ղեկավար անձնակազմի ուսուցում, որակի կառավարում և արդյունավետ, ճիշտ և անվտանգ սարքավորումների կիրառում:

B.9.

Ականների մասին իրազեկում

Ականների վտանգի իրազեկման (ԱՎԻ, MRE) մասն է հանդիսանում:

B.10.

Ականների վտանգի իրազեկում (ԱՎԻ)

Գործողություններ, որոնք նպատակ ունեն նվազեցնել ականների/ՊՊՄ-ների պայթեցման արդյունքում վնասվածքի վտանգը՝ մարդկանց իրազեկվածության աստիճանը բարձրացնելու և վարքագծային փոփոխություններ քարոզելու միջոցով, այդ թվում հանրային տեղեկատվության տարածումը, իրազեկումը և ուսուցումը, ինչպես նաև հակաականային գործողություններում համայնքի հետ կապի ապահովումը:

B.11.

Մոնիտորինգ

Գնահատման համատեքստում այս տերմինը նշանակում է շարունակական մի գործառույթ, որը հատկորոշված ցուցանիշների վերաբերյալ տվյալների համակարգված հավաքագրում է կիրառում՝ ընթացիկ միջամտության ղեկավարներին ու հիմնական շահագրգիռ կողմերին ապահովելու նպատակների առաջընթացի և իրականացման ծավալի, ինչպես նաև հատկացված ֆինանսների օգտագործման առաջընթացի մասին ցուցանշումներով:

ԱՎԻ-ի համատեքստում այս տերմինը նշանակում է տեղի ունեցող երևույթների չափման կամ դիտարկման գործընթաց: Այն իր մեջ ներառում է.

- a) Չափման առաջընթացը միջամտության իրականացման պլանի կապակցությամբ՝ ծրագրեր/նախագծեր/գործողություններ, ռազմավարություն, քաղաքականություն և առանձնահատուկ նպատակներ;

բ) Փոփոխության չափում որևէ պայմանի կամ կայմանների խմբի դեպքում կամ դրանց բացակայության դեպքում (օրինակ՝ երեխաների կամ կանանց իրավիճակի փոփոխություն կամ էլ փոփոխություն երկրի ավելի լայն մասշտաբի համատեքստում):

Նշում՝ Սահմանումը սկիզբ է առնում UNICEF-ի «Կանոնակարգի և ծրագրավորման ձեռնարկից»:

B.12.

ԱՎԻ կազմակերպություն

Ցանկացած կազմակերպություն (պետական, հասարակական կամ քաղաքացիական հասարակության, ինչպես օրինակ կանանց միություն, երիտասարդական միություն, կարմիր խաչի և մահիկի միություններ), առևտրային հաստատություն և զինվորականներ (ներառյալ խաղաղապահ ուժերը), որոնք պատասխանատու են ԱՎԻ նախագծերի և առաջադրանքների իրականացման համար: ԱՎԻ կազմակերպությունը կարող է հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ լինել: ՏԱՎԻ ենթամիավոր՝ տերմինը վերաբերում է կազմակերպության այն ստորաբաժանմանը, անկախ անվանումից, որը հավաստագրված է կատարելու նախատեսված մեկ կամ ավելի ԱՎԻ գործողություն, ինչպիսիք են հանրային իրազեկման նախագիծ, դպրոցական կրթական նախագծեր կամ ականազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովման նախագծի գնահատում:

B.13.

Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

Ականապատ տարածքներ ունեցող բոլոր այն երկրների պետական գերատեսչություն(ներ)ը, կազմակերպություն(ներ)ը կամ հաստատություն(ներ)ը, որը(որոնք) պատասխանատու են հակաականային գործունեության կարգավորման, կառավարման և համակարգման համար:

Նշում՝ Հիմնականում Հակաականային գործունեության կենտրոնը (ՀԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից:

Նշում՝ Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ-ը կամ որևէ այլ ճանաչված միջազգային կազմակերպություն կարող է անհրաժեշտ և տեղին համարել ստանձնելու ԱԳԱՄ-ի պարտականությունների մի մասը կամ ամբողջությամբ և իրականացնելու գործառնությունների մի մասը կամ ամբողջությամբ:

B.14.

Հանրային տեղեկատվության տարածում

Ականների կամ ՊՊՄ-ների մասին տեղեկություններ, որոնք օգտագործվում են ազգաբնակչության իրազեկելու կամ ունեցած տեղեկությունները թարմացնելու համար: Այն կարող է վերաբերել որոշակի հարցերի, օրինակ՝ ականների արգելման մասին օրենսդրության պահպանում, կամ կարող է օգտագործվել հակաականային գործունեության ծրագրին հանրության կողմից ցուցաբերած օժանդակությունն ուժեղացնելու համար: Այսպիսի նախագծերը, սովորաբար, պարունակում են դիսկի կրճատման մասին ուղերձներ, սակայն կարող են օգտագործվել նաև հակաականային գործունեության ազգային քաղաքականությունն արտացոլելու համար:

B.15.

Չպայթած զինամթերք (ՉԶ)

Պայթուցիկ զինամթերք, որը լիցքավորվել է, ձուլվել/հագեցվել պայթացիչով, զինվել կամ որևէ այլ կերպ նախապատրաստվել օգտագործման համար կամ օգտագործվել: Այն կարող է լինել հրանետված, ցած գցված, տեղադրված կամ նախատեսված, սակայն դեռևս չպայթեցված՝ ձախողման պատճառով, շահագործման կառուցվածքից ելնելով կամ էլ որևէ այլ պատճառով:

B.16.

ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱՕ)

ՄԱԿ-ի կազմում կարևոր մի հանգույց՝ ականների հետ կապված բոլոր գործողությունների համար:

Նշում՝ ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ի քարտուղարության կառուցվածքային միավոր է, որը պատասխանատու է միջազգային համայնքի կողմից կիրառելու նպատակով ՀԱԳՄՉ մշակման և պահպանման համար:

Նշում՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը ԱՎԻ-ի հիմնական մարմինն է և ենթակա է ՄԱԿԱԾ-ի ընդհանուր համակարգմանը:

B.17.

Գյուղերի ականագերծում

Սովորաբար տեղական բնակչության կողմից, իրենց կամ իրենց անմիջական համայնքի անունից ականների և/կամ ՊՊՄ-ների վնասագերծման և վտանգավոր տարածքների նշագծման ուղղությամբ անկախ իրականացվող աշխատանքներ: Հաճախ ներկայացվելով որպես *անկախ նախաձեռնություն կամ ինքնակամ ականագերծում*՝ գյուղերի վնասագերծումն սովորաբար իրականացվում է ականագերծման գործողությունների պաշտոնական միջոցառումներից անկախ կամ նրանց զուգահեռ, ինչպիսիք են ռազմական ուժերի կողմից կատարվող *ականագերծման գործողությունները* կամ *մարդասիրական ականագերծումը*, որը կարող է օժանդակվել ՄԱԿ, միջազգային կամ ազգային հասարակական կազմակերպությունների, մասնավոր ձեռնարկությունների և կառավարության և այլ աղբյուրների կողմից:

Փոփոխությունների գրանցում

ՀԱԳՄՉ-երի փոփոխությունների կառավարում

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ անգամ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական նկատառումներից:

Այս ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են, և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ, և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցում՝ մինչև նոր վերանայման իրականացումը:

ՀԱԳՄՉ-ի ամենավերջին փոփոխություններն այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՉ-ի կայքէջում www.mineactionstandards.org:

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ
1	1-ը դեկտեմբերի 2004թ.	1. Ֆորմատի փոփոխություններ: 2. Տեքստի խմբագրական չնչին փոփոխություններ: 3. Փոփոխություններ տերմիններում, սահանումներում և հապավումներում ըստ անհրաժեշտության՝ ապահովելու տվյալ ՀԱԳՄՉ-ի համապատասխանեցումը ՀԱԳՄՉ 04.10-ին:
2	23-ը հուլիսի 2005թ.	1. Հավելված Բ՝ “Ականների վտանգի իրազեկում (ԱՎԻ, MRE)” տերմինի սահմանման փոփոխում՝ համապատասխանեցնելու ՀԱԳՄՉ 04.10-ին:
3	1-ն օգոստոսի 2006թ.	1. Չնչին փոփոխություններ/լրացումներ նախաբանի առաջին և երկրորդ պարբերություններում: 2. “Ականներ և ՊՊՄ-ներ” տերմինի ավելացում: 3. “Սպառնալիք” տերմինի հեռացում ՀԱԳՄՉ-երի ողջ շարքից: